

ՀԱՅ-ԱՍՈՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ IV—V ԴԱՐԵՐՈՒՄ

Հ. Գ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հայերի հարևան ասորի ժողովրդի վերաբերյալ թե՛ հայ և թե՛ օտար պատմիչներից շատ քիչ տեղեկություններ են հասել մեզ: Ասորիների պատմության համար աղբյուր են ծառայում իրենց պատմիչները, հատկապես «Նդեսիայի ժամանակագրություն» կոչված գիրքը, որը առաջին անգամ հրատարակել է XVIII դարի հայտնի ասորագետ Ասսեմանին¹:

Ասորիներն արամեական այն ցեղերից են, որոնք ապրել են Միջագետքում, Սիրիայում: Սելևկյանների անկումից հետո, մ. թ. ա. II դարում, այդ ցեղերին հաջողվում է առաջին անգամ Նդեսիայում ստեղծել պետականություն և կազմել Օսրոյենե անունով հայտնի թագավորությունը: Արդեն Սելևկյանների իշխանության օրոք ամբողջ Միջագետքն ու Ասորիքը կարևոր նշանակություն էին ձեռք բերել և Արևելքի ու Արևմուտքի միջև դարգացող միջազգային առևտրում խոշոր դեր էին կատարում. Հեռավոր Արևելքից, Փոքր Ասիայից Միջերկրականի նավահանգիստները եկող կարավաններն անցնում էին այս տերիտորիաներով: Միջագետքի այս նպաստավոր դիրքը բազմաթիվ մակեդոնացիների կամ հույների ձգում է դեպի իրեն: Նրանք կառուցում են Նոր քաղաքներ և վերակառուցում հները: Միջագետքում բնակվող հույներից շատերը արհեստավորներ, վարպետներ, առևտրականներ էին, և քաղաքներում խանութներ կամ գործատներ ունեին: Երանցից բացի, կային նաև հունական վերնախավի Ներկայացուցիչներ, բարձրաստիճան գինավորականներ, որոնք պատմիչների վկայությամբ, գրավել էին քաղաքների շրջակայքում գտնվող լավագույն հողերը. այդ հողերի վրա եկվոր տերերը աշխատեցնում էին ստրկացված բնիկներին և դերիներին²: Արհեստների և միջազգային առևտրի դարգացումով թե՛ եկվոր, և թե՛ տեղական վերնախավը ստրկական աշխատանքների հաշվին խոշոր եկամուտներ էր ստանում: Գուտակվող հարստության շնորհիվ նրանք կառուցում էին պալատներ, տաճարներ, գրոսավայրեր: Քաղաքներում ստեղծվում էին հելլենիստական մշակույթի կոթողներ ու հուշարձաններ:

Միջագետքի, Ասորիքի քաղաքների դարգացման հետ պետք է կապել նաև նրանցից ոչ հեռու գտնվող Մոսիրում հայկական առաջին քաղաքների՝ Արշամաշատի և Արկաթիակերտի առաջացումը³, որովհետև Միջագետքից Հեռավոր Արևելք դնացող և վերադարձող կարավանները անցնում էին Մոսիրի վրայով:

¹ Assemani, Chronicon Edessenum, Bibliotheca Orientalis, t. 1, էջ 392:

² A. H. M. Jones, The Cities of the Eastern Roman Provinces, Oxford, 1937, էջ 218:

³ Я. А. Манандян, О торговле и городах Армении, Ереван, 1954, էջ 30:

Հայերն ավելի անմիջական շփման մեջ մտան Միջագետքի, Ասորիքի բնակչության հետ, երբ մ. թ. ա. I դարի սկզբներին Տիգրան Բ-ն իր գերիշխանության ներքո վերցրեց այդ երկրամասերը: Նա, ինչպես վկայում է հույն պատմիչ Պլուտարքոսը, այս վայրերից բազմաձազար մարդկանց, որոնց մեջ էին նաև մեծ քանակությամբ ասորիներ, դադիվեցնում էր Հայաստան՝ իր նոր մայրաքաղաքը կառուցելու և ճոխացնելու նպատակով: Միջագետքի, Ասորիքի վերնախավը ողջունեց Տիգրան Բ-ի առաջխաղացումը, որովհետև նման հզոր և խոշոր պետության գերիշխանությունը կապահովեր առևտրական կարավանների անվտանգ երթևեկությունը և կնպաստեր առևտրական շուկաների ընդլայնմանը⁵:

Ասորական քաղաքները միջազգային առևտրում ունեցած իրենց կարևոր նշանակությունը չեն կորցնում նաև հետագայում, երբ հռոմեական լեգեոնները Տրալանոս կայսեր ղիխավորությամբ առաջին անգամ անցնում են Եփրատի այս կողմը և ապրանքների փոխադրության համար մաքսերի գանձումը կազմակերպում Եփրատ ու Տիգրիս գետերի հոշակավոր գետանցքների վրա⁶: Ասորիները տնտեսական և մշակութային խոշոր դործունեություն են ծավալում ու նշանակալից գեր կատարում Սասանյանների տիրապետության օրոք, երբ սրանց նվաճումների հետևանքով նորից պարսկական գերիշխանության տակ է ընկնում միջազգային առևտրի ամբողջ հարավային գիծը: Պարսիկներն իրենց առևտրական գործարքների և քաղաքների զարգացման համար օգտագործում են ասորիների ձեռներեցությունը և լեզուների իմացությունը: Այսպիսով, ասորիները դառնում են լավագույն միջնորդներ Պարսկաստանի, Նրան հարևան երկրների և Արևմուտքի միջև տեղի ունեցող առևտրական ու մշակութային հարաբերությունների համար:

Հայաստանը ևս ընդգրկվում էր ասորիների այս գործունեության շրջանակների մեջ: VI դարի ասորի պատմիչ Մշիխա-Ջեխան, հին աղբյուրներից տեղեկություններ քաղելով, գրում է, որ ասորի առաջին քրիստոնյա առևտրականներն իրենց կարավաններով Եղեսիայից դալիս էին Ադձնիք և այնտեղից իրենց ճանապարհը շարունակում ղեպի Ադիարենի մայրաքաղաք Արբելյան: Հավանաբար, ասորի առևտրականներն իրենց ապրանքների հետ բերում էին նաև քրիստոնեական կրոնի սերմերը:

Մեր պատմիչները նույնպես նշում են ասորիների մշակութային ու կրոնական գործունեությունը, բայց համարյա ոչինչ չեն ասում նրանց տնտեսական կապերի մասին⁸: «Երբ թղթոց»-ը, որը հայ և օտար հոգևորականների միջև տեղի ունեցող թղթակցությունների մի հավաքածու է, տեղեկություններ է պարունակում հայ-ասորական տնտեսական կապերի մասին, թեև ավելի ուշ շրջանի վերաբերյալ: Այսպես, նամակներից մեկում կարդում ենք, որ «անիծյալ» նեստորականները եկել և բնակվել են «յաշխարհիս մերում պատճառա

⁴ Plutarque, Les vies des hommes, Lucullus, էջ 603:

⁵ Н. Пигулевская, Города Ирана в раннем средневековье, М.—Л., 1956, էջ 56:

⁶ Հ. Մանանդյան, Փնական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, էջ 30:

⁷ M s i h a-Z k h a, Histoire d'Adiabene, ed. A. Mingana, Sources syriaques, vol. 1, Leipzig, էջ 76:

⁸ «Փառատուի Բուզանդացույ Պատմութիւն Հայոց», դպր. Գ., դլ. ԺԳ, Վենետիկ, 1914, էջ 55: «Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց», գիրք Գ, գլ. 42, Տփղիս, 1913, էջ 201: Հոփհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 38:

վաճառաշահութեան»⁹։ Պետք է նշել, որ ասորիները Հայաստան էին գալիս առևտրական նպատակներով, սակայն տարածում էին նաև կրոնական գաղափարներ, որպեսզի այդ կերպ իրենց համար ստեղծեն համակիրների օջախ, որը կարող էր պաշտպանել նրանց տնտեսական շահերը։ Ընդհանրապես արևելքում կրոնական քարոզչությունները կատարվում էին առևտրականների միջոցով։ Հովսեփ Փլավիոսը իր «Հրեական հնություններ» գրքում գրում է, որ հրեա վաճառականները Միջագետքում, Ասորիքում տարածում էին հրեական կրոնի սկզբունքները¹⁰։

Ասորիների տնտեսական այս գործունեությունից ոչ նվազ նշանակություն ունեին նաև նրանց մշակութային ծառայությունները։ Պետք է նշել, որ հիմնականում նրանց միջոցով է, որ հելլենիստական քաղաքակրթության նվաճումները թափանցում են Մերձավոր Արևելքի երկրները։ Նրանք առաջիններն էին, որ թարգմանեցին և տարածեցին հունական փիլիսոփայության, գիտության ու գրականության վերաբերյալ գործերը։

Ինչպես վկայում են համապատասխան աղբյուրները¹¹, թեև Միջագետքի, Ասորիքի քաղաքների բնակչության մեծամասնությունը ասորիներ էին, սակայն բարձր խավի կենցաղում տիրապետողը հունական քաղաքակրթությունն ու հունական լեզուն էր. մայրենի լեզվով խոսելը համարվում էր նվաստացում, այդ լեզվով, ըստ նրանց, պիտի խոսեին հասարակության ստորին խավերը։ Միանգամայն այլ է կղեր պատկերը եղեսիայում՝ Ոսրոյենի մայրաքաղաքում։ Այստեղ թե՛ գրական և թե՛ ժողովրդի խոսակցական լեզուն հանդիսանում էր ասորերենը, որով և ստեղծվեց հարուստ ու բազմաբովանդակ մի գրականություն։

Ասորերենը, սկսած մեր թվականության առաջին դարերից, հետզհետե գրավում է արամեերենի տեղը։ Ասորերենի դերի նման բարձրացումը պայմանավորված էր ասորիների՝ միջազգային առևտրի և մշակութային հարաբերությունների մեջ կատարած բազմակողմանի գործունեությամբ։ Ասորագետ պատմաբաններ Դյուվալը, Ռայթը, Շարոն և Կրիշներ, ասորերենի միջազգային նշանակությունը հիմնականում վերագրել են քրիստոնյա քարոզիչների գործունեությանը¹²։ Մինչդեռ իրականում Օսրոյենի առևտրական կապերի ընդլայնումը և նշանակությունը երկրի լեզուն բարձրացնում են միջազգային լեզվի աստիճանի։ Իհարկե, չպետք է բացառել նաև այդ լեզվով ստեղծված քրիստոնեական գրականության դերը։

IV դարի առաջին կեսին ասորիների և ընդհանրապես Արևելքի ժողովուրդների տնտեսությունը անկում է ապրում, որովհետև պարսիկների ու հռոմեացիների միջև անընդհատ տեղի ունեցող պատերազմները թուլացրել էին միջազգային առևտրի ընթացքն ու քայքայել ներքին արտադրությունը։ Տիրում էր ծայր աստիճան աղքատություն ու թշվառություն։ IV դարի խոշոր հոգևորական դեմքերից մեկը՝ Հովհան Ոսկերեբանը, ստիպված էր խոստովանելու, որ «հարուստները ճնշում էին աղքատներին. արհեստավորները, իրենց գործիք-

⁹ «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 70, 72։

¹⁰ Flavius Josephus, Antiquities of the Jews, Book XX, Chpt. II, էջ 483։

¹¹ A. Jones, The Cities of the Eastern Roman Provinces, էջ 218։

¹² R. Duval, Histoire d'Edesse, «Journal Asiatique», 8ème serie, t. XVIII, Paris, 1891, chpt. V, էջ 231, J. B. Chabot, Littérature Syrienne, Paris, 1934, էջ 8։

ների սեփականությունը շկորցնելու համար ստիպված էին փող պարտք վերցնել: Առ ու ծախի ժամանակ սուտը և սուտ երդումն էր իշխում. հողատերերն անգույթ էին դարձել. վարձու աշխատողներին թե՛ լավ և թե՛ վատ բերքի ժամանակ նույն պահանջներն էին ներկայացնում. վարձու այս մարդիկ շատ անգամ ամբողջ ձմեռն էլ աշխատում էին իրենց տերերին բավարարելու համար ու երբ չէին կարողանում իրենց պարտքը փակել, ստիպված փող էին պարտք վերցնում մինչև 50 տոկոսով» (Matt. 62, cf. Act. 18)¹³:

Մարդկանց ուշադրությունը այս վիճակից շեղելու մի փորձ էր Միլանի հրովարտակը, որի ազդեցությամբ քրիստոնյաները միառժամանակ համակրանքով են վերաբերվում Հռոմեական կայսրությանը: Այդպես էին վարվում հատկապես ասորիները, որոնք պարսկական տիրապետության մեջ իրենց ծավալած քարոզչական գործունեությամբ փաստորեն օգնում էին Բյուզանդիային ու խարխուլում պարսկական իշխանության հիմքերը:

Այս հանգամանքը, սակայն, չէր վրիպում Շապուհ Բ-ի տեսադաշտից: Հռոմեական կայսրությունից կրած հարվածներից և ներքին երկպառակություններից թուլացած պարսկական արքունիքը IV դ. ամրապնդում է երկրի կենտրոնական իշխանությունը, նրա ռազմական ուժը: Այդ նպատակով Շապուհ Բ-ն մեծ հայածանքներ է սկսում պարսկական տիրապետության մեջ ուժեղացող քրիստոնեական զաղափարախոսության դեմ, որովհետև, ինչպես վկայում է ասորի պատմիչ Մշիխա-Ջեխան, պարսիկները քրիստոնյաներին համարում էին «Հռոմեական կայսրության գործակալներ»¹⁴: Եվ որովհետև Պարսկաստանում քրիստոնեական կրոնը տարածողներն ու կրողները հիմնականում ասորիներն էին, ուստի ասորի քրիստոնյաների դեմ հայածանքն պռանձնապես դաժան բնույթ էր կրում: Ասորական ազդյուններում և հատկապես վարքագրական բազմաթիվ երկերում նկարագրված են այդ հայածանքի մանրամասնությունները¹⁵:

Ասորական ազդյունների մանրակրկիտ ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ IV դարում ասորիների և պարսիկների փոխհարաբերություններն ունեցել են երկու շրջան. առաջին շրջանում, այսինքն մինչև մ. թ. 370 թ., ասորիները եղել են Հռոմեական կայսրության համակիրները և որոշ հույսեր են կապել նրա հաջողությունների հետ: Եվ իսկապես, այս փուլում ասորի քարոզիչները պարսիկների համար Հռոմեական լեզուներից ավելի մեծ վտանգ էին ներկայացնում:

363 թ. Հռոմեական բանակները պարտվում են: Նույն թվականին կնքված պարսկա-բյուզանդական դաշինքը վերականգնում էր Պարսկաստանի հեղինակությունը Արևելքում: Հռոմի քաղաքական թուլացումը աշխուժացնում էր կայսրության արևելյան սահմաններում ապրող ժողովուրդներին, որոնք էլ էին որոնում տնտեսական ծանր վիճակից ու փորձում ազատվել բյուզանդական գերիշխանությունից: Կայսրության կենտրոնական իշխանությունը իր վիճակը կայունացնելու և ամրապնդելու համար դիմում է ահարկումների, ստեղծվում են լրտեսների և զինվորական ոստիկանության մեծ բանակներ:

¹³ Bouchier, Syria as a Roman Province, Oxford, էջ 75:

¹⁴ Msitha-Zekha, Histoire d'Adiabene, էջ 108:

¹⁵ W. Cureton, Ancient Syriaque Documents, London, 1864. A. J. Wensinck, Legends of Eastern Saints, vol. I. Leyden, 1911. Bedjan, Acta martyrum et sanctorum, Paris, 1890.

ժամանակի պատմիչներից կեղծ Արիստիդեսը վկայում է, որ «բոլոր նահանգները պահվում էին վախի ու սարսափի մեջ. բազմաթիվ լրտեսներ շրջում էին քաղաքներում և լսում, թե ինչ էն խոսում ժողովրդի մեջ»: Ասկարելի էր մրտաձել կամ ազատ խոսել, որովհետև վերացվել էին ազատ խոսքի ամենատարրական ձևերը և ամեն մարդ վախենում էր նույնիսկ իր սովերից»¹⁶:

Քաղաքական նման պայմանները մեծ դժգոհություն էին առաջացնում տեղական ժողովուրդների կամ քաղաքների բնակչության մեջ: Առաջին քաղաքներից մեկը, որը ընդվզում է հռոմեացիների դեմ, Եղեսիան էր: Այստեղ ասորական մշակույթի արդեն հարուստ ավանդներով զինված ասորական եկեղեցիներ կար տարիների գործունեությամբ կարողացել էր ինքնուրույնություն ապահովող պայմաններ ստեղծել: Օսրոյենում դպրոցները պատրաստում էին ասորական, պարսկական և հունական գրականության ու գիտության հիմունքներով իրենց եկեղեցու շահերը պաշտպանող «մշակներ»: Դրանցից հայտնի էին Մծրինի և Եղեսիայի դպրոցները, որոնք իրենց ձեռքն էին վերցրել երկրի մշակութային կյանքի ղեկավարությունը: 363 թ. պարսկահռոմեական դաշինքի համաձայն, Մծրինը մտնում է պարսկական տիրապետության մեջ. այդ կապակցությամբ բազմաթիվ ասորիներ լքում են քաղաքը և գալիս Եղեսիա: Եկվորների մեջ էր ասորական գրականության խոշոր ղեկավարներից մեկը՝ Եփրեմ Ասորին. նա հիմնադրում է Եղեսիայի նշանավոր «դպրոցը», որը պատմության մեջ հայտնի է «պարսկական դպրոց» անունով: VI դարի ասորի պատմիչ Քարհազրեշարբան գրում է, որ «դպրոցը պարսկական է կոչվել, որովհետև այնտեղ սովորելու էին գալիս պարսկական տիրապետության մեջ մտնող բոլոր ժողովուրդների ուսման ծառայի երիտասարդները»¹⁷:

Ղազար Փարպեցին իր «Հայոց պատմության մեջ» գրում է, որ հայ երիտասարդները, հակառակ բոլոր տեսակի դժվարությունների, գնում էին ասորական դպրոցներում սովորելու: Ուսման համար Եղեսիան հարմար քաղաք էր, որովհետև Պեռ վաղուց բոլորին հայտնի էր Եղեսիայի հռչակավոր գրադարանը կամ, ինչպես պատմիչներն են անվանում՝ «դիվանը»¹⁸: Շուտով Եփրեմ Ասորին իր դպրոցի հետ միասին միանում է այն շարժմանը, որը ասորական եկեղեցին պաշտպանում էր Հռոմի հարձակումներից: Կայսրությունը քաղաքականապես և տնտեսապես իրեն ենթարկելով Արևելքի ժողովուրդներին, ձրգոտում էր Եփրեմ նրանց նաև գաղափարապես, և որովհետև այդ խնդրում ամենամեծ խոչընդոտը հանդիսանում էին ասորական մշակույթն ու եկեղեցին, ուստի իր հարվածներն ուղղում էր հատկապես նրանց դեմ: Այս առթիվ գրած բանաստեղծություններում Եփրեմ Ասորին կոչ էր անում ժողովրդին՝ միահամուռ դիմադրել հռոմեական բռնակալությանը¹⁹:

Վաղեսի դեմ մղած կռիվների օրերին մահանում է Եփրեմը: Ասորական թույլ ուժերը չեն կարողանում երկար դիմադրել հռոմեական բանակներին և բացում են իրենց քաղաքի դռները: Կայսեր առաջին գործն է լինում արքային

¹⁶ Rostovtzeff, The Social and Economic History of the Roman Empire, Oxford, 1926, էջ 400:

¹⁷ J. B. Chabot, Recit de Barhadbesabba, էջ 139:

¹⁸ «Ղազարա, Փարպեցույ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1904, էջ 13—14:

¹⁹ «Եւսերիոսի Կեսարացույ Պատմութիւն եկեղեցույ», Վենետիկ, 1877, էջ 60: «Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց», գիրք Բ, գլ. Ժ, էջ 120:

²⁰ R. Duval, Histoire d'Edesse, էջ 407—408:

քաղաքի եպիսկոպոս Բարսեպին և շարժման ղեկավարներին: Եղևսիայում գործերը հանձնվում են արիստականներին, որոնք հայտնի էին իրենց հոռմեասիրությամբ²¹:

Պարսկական արքունիքը, տեսնելով հոռմեացիների և ասորիների հակամարտությունը, փոխում է իր վերաբերմունքը ղեպի ասորի քրիստոնյաները և ձգտում օգտվել Արևելքի ու Արևմուտքի քրիստոնյաների միջև ստեղծված հակամարտությունից: Դադարեցվում են հալածանքներն ու հետապնդումները:

Այսպիսով, սկսվում է պարսկա-ասորական հարաբերությունների երկրորդ փուլը:

Մեր թվարկության 387 թ. տեղի է ունենում Հայաստանի բաժանումը Հռոմի և Պարսկաստանի միջև: Երկրի մեծ մասը ընկնում է պարսիկների գերիշխանության ներքո, իսկ մյուս մասը՝ հոռմեացիների: Պարսկական մասում հայ կեղևեցու պաշտոնեությունը զրկվում է հոռմեական կենտրոնների հետ կապեր հաստատելու հնարավորությունից, որովհետև պարսիկներն ամեն կերպ խոչընդոտներ էին ստեղծում ու կասկածանքով նայում հայերի և հույների հարաբերություններին: Հայաստանում պարսկասերների կուսակցությունը պարսկական իշխանության օգնությամբ գործնական միջոցների է դիմում: Մեր պատմիչների տեղեկությունների համաձայն, նրանք այրում են հունարեն գրքերը և արգելում հոռմեացի գործածությունը կեղևեցիներում ու նրա փոխարեն թույլատրում ասորական դպրությունն ու լեզուն²²: Պարսկական մասում ապրող հայերին մնում էր օգտվել պարսիկների՝ ղեպի ասորիների ունեցած բարյացակամ վերաբերմունքից և ամրացնել մշակութային կապերը Եղևսիայի հետ: Սրանով պետք է բացատրել, որ հայերի և ասորիների փոխհարաբերություններն ընդունում են սերտ բնույթ:

Հայ-ասորական մշակութային կապերի ամենապերճախոս փաստերից է հայ գրերի ստեղծման գործում հայ և ասորի գիտնականների համագործակցությունը: Ինչպես վկայում է Կորյունը, Մեսրոպի, Սահակի և հայոց թագավոր Վուստրիանի միջև տեղի ունեցող բանակցությունների ժամանակ հայոց արքան պատմում է, որ իրեն հայտնի է Դանիել անունով մի ազնվական ասորի եպիսկոպոս, որը հանկարծ դուրս է հայ լեզվի նշանագրեր. նրանք Վահրիճ անունով մեկին հրովարտականքով ուղարկում են Հարել երեցի մոտ. հայերը դիմում են այս երեցին, որովհետև նա Դանիելի «մերձավորն էր»: Հարելը սիրով ընդունում է հայերի խնդրանքը և «փութանակի հասանէր առ Դանիէլն և նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրացն, և ապա առեալ ի նմանէ առաքէր առ արքայն յերկիրն Հայոց»²³:

Մեր պատմիչները հիշում են Հարելին՝ Դանիելից հայկական նշանագրերը վերցնելու կապակցությամբ ու ոչինչ չեն ասում նրա ազգության և անձի վերաբերյալ: Մինչև 1930-ական թվականները պատմագիտության մեջ Հարելին վերագրում էին հայկական ծագում: Ակիրնյանը իր «Հայերեն այբուբենի գյուտը» ուսումնասիրության մեջ մեր կարծիքով ճիշտ ենթադրություն է կատարում,

21 Արիոսը ծնվել է մ. թ. 270 թ. Սիրենաիկոմում և կամ ըստ ոմանց՝ Ալեքսանդրիայում: Նա քարոզում էր, որ Քրիստոսը սովորական անձնավորություն է: Արիոսին դատապարտել են Նիկիո 325 թ. ժողովում: Արիոսի մահից հետո նրա վարդապետությունը տարածվել է բազմաթիվ երկրներում:

22 «Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց», գիրք Գ, գլ. ԾԵ, էջ 329:

23 Կորյուն, վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 42:

երբ գրում է, որ Հարելը հայտնի Իրաս կամ Հիրա ասորի գիտնական եպիսկոպոսն էր, որը Եղեսիայի Ռարուլաս եպիսկոպոսից հետո մ. թ. 435 թ. գրապետից Օսրոյենի մայրաքաղաք Եղեսիայի եպիսկոպոսական աթոռը Իրավառի է Ակինյանը, երբ ասում է, որ հայ երեցին թագավորն ու կաթողիկոսը չէին դիմի նման հրովարտականների կամ պատգամավորների միջոցով: Միևնույն ժամանակ նա կարծում է, որ Հարելը սովորական երեցներից չէր կարող լինել, քանի որ նա առնվազն պետք է գաղափար ունենար հայ լեզվի և նրա հնչյունական կազմի վերաբերյալ, գիտենար այլ լեզուներ, այսինքն՝ լիներ խոշոր գիտնական²⁴:

Հիրան կամ Իրասը, ըստ ասորական աղբյուրների, V դարի սկզբներից ղեկավարում էր Եղեսիայի հայտնի «պարսկական դպրոցը»: Նա այդ դպրոցում թարգմանում էր Թեոդոր Մոպսուեստացու, Թեոդորի գործերը ու դասավանդման ժամանակ մեկնում դրանք աշակերտներին կամ ուսանողներին²⁵: Այս տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Հիրան իր ժամանակի խոշոր գիտնականներից մեկն էր, և եթե նա չի եղել Մոպսուեստացու աշակերտը, ապա նրա գործերի և գաղափարների ջերմ տարածողներից մեկն էր, և իր այս գրական ու մանկավարժական գործունեությամբ հայտնի էր դարձել հարևան երկրներում. ուստի պատահական չպետք է լինի Մեսրոպ Մաշտոցի և նրա գործակիցների դիմումը Հիրային:

Սակայն չենք կարող համաձայնվել Ակինյանի արև ենթադրությունների հետ, որոնք առաջ են քաշվում Դանիելի անձնավորության ու պաշտոնավարության տեղի մասին: Մարկավարտին հետևելով, նա ևս գալիս է այն եզրակացության, թե Դանիելը պետք է որ Աղձնիքի եպիսկոպոս եղած լինի. ուստի առաջարկում է Կորյունի բնագրում եղող «ուրումն ասորոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն կոչեցելոյ» նախադասությունը փոխել «Ուրումն ասորոյ եպիսկոպոսի Արզնարզիւն կամ Արզնականի և կամ Արզնի (Աղձնի)»²⁶:

Ասորական աղբյուրները հիշատակում են Հիրայի քեռորդոն՝ Խառան քաղաքի Դանիել եպիսկոպոսին: Այսպիսով, եթե ընդունելու լինենք, որ Հարելը Հիրան կամ Իրասն է, ուրեմն, հայ պատմիչների տեղեկությունների համաձայն, Դանիել եպիսկոպոսը՝ Հիրայի քեռորդին, ոչ թե Աղձնիքի եպիսկոպոսն էր, այլ Խառանի: Հոգուտ այս եզրակացության խոսում է նաև Խարենացու այն վկայությունը, թե երբ պարզվում է, որ բերված նշանագրերը թերի են, Մեսրոպ Մաշտոցը իր աշակերտներով միասին գալիս է Միջագետք Դանիել եպիսկոպոսի մոտ «եւ ոչ աւելի ինչ գտեալ քան զառաջինն անցանէ և յԵղեսիայ»: Ուրեմն Խորենացու այս վկայությունը մի անգամ ևս հաստատում է, որ Դանիելը ոչ թե Աղձնիքում, այլ Միջագետքում՝ Խառան քաղաքում էր գտնվում: Ակինյանը, վկայակոչելով 444 թ. Անտիոքի ժողովին մասնակցած «Դանիել երիտասարդ եպիսկոպոսի» ներկայությունը, գտնում է, որ սա «չէր կրնար 406-ին եպիսկոպոսական գործունեություն ունենալ»: Այստեղ, սակայն, խոսքը ուրիշ եպիսկոպոսի մասին է և պետք չէ նրան շփոթել Հիրայի քեռորդի Դանիելի հետ:

Հայ գրերի ստեղծման գործում հայ և ասորի գիտնականների համագործակցության մասին են վկայում Խորենացու պատմության մեջ բերված Թեոդոս

²⁴ Ն. Ակինյան, Հայերեն այբուբենի գյուտը, «Հանդես ամսօրյա», 1938, էջ 296:

²⁵ J. B. Chabot, Recit de Barhadbesabba էջ 160:

²⁶ Ն. Ակինյան, Հայերեն այբուբենի գյուտը, էջ 289:

կայսեր, Ատտիկոս Լպիսկոպոսի և Սահակ կաթողիկոսի նամակները. այս նամակների վավերականությունը և այս մարդկանց միջև տեղի ունեցած իրդ-թակցությունը կասկածներ չեն հարուցում, քանի որ այդ փաստաթղթերում արժարժավոր պատմական հարցերը բնորոշ են ժամանակի համար: Ռեոդոս կայսրը և Ատտիկոս Լպիսկոպոսը մեղադրում են հայերին այն բանի համար, որ գրերի ստեղծման խնդրով նրանք հույների փոխարեն դիմել են ասորիներին, մանավանդ, ինչպես գրում են նրանք իրենց նամակներում, այն ժամանակ ամբողջ աշխարհին հայտնի էր Հովհան Ոսկերեղանը և կարելի էր նրանից օգնություն խնդրել: Բյուզանդական այս մեղադրանքից խուսափելու հույսով հայերը ստեղծում են հայկական տառերի հրաշքով ստանալու պատմությունը²⁸:

Հայ-ասորական մշակութային հարաբերությունների կարևոր փաստերից է նաև «Աստվածաշնչի» առաջին հայերեն թարգմանությունը: Հենայած Ղազար Փարպեցին վկայում է, որ մեր թարգմանիչները «Աստվածաշունչը» հունարենից թարգմանեցին²⁹ և այսօր էլ մեզ է հասել այդ թարգմանությունը, սակայն այս վկայությունը վերաբերում է երկրորդ թարգմանությանը, իսկ առաջինի մասին Փարպեցին լռում է, որովհետև թե՛ նրա «Հայոց պատմության» մեջ և թե՛ «Թրդթում» զգացվում է ատելություն ասորիների նկատմամբ: Մինչդեռ ավելի վաղ շրջանի պատմիչներ Կորյունի և Խորենացու մաստ այդ տեղեկները չի զգացվում: Խորենացին պատմում է, որ Մեսրոպը, ազվանների համար գրեր հորինելուց հետո, վերադառնում է Հայաստան և «զանում է զմեծն Սահակ թարգմանութեան պարապետ յասորոյն, յոչ լինելոյ յունի», որովհետև, շարունակում է պատմիչը, «նախ ի Մհերոթանայ այրեալ լինէին ընդհանուր աշխարհիս յոյն գիրք դարձեալ ի բաժանել զաշխարհս Հայոց՝ շտային պարսիկ վերակացութն յոյն ումեք զպրութիւն յիրեանց մասինն. այլ միայն ասորի»³⁰:

Այսպիսով, առաջին թարգմանությունը կատարվում է ասորերենից: Սակայն հարց է ծագում, թե ինչ տարբերություն կար ասորական և հունական «Աստվածաշնչի» թարգմանությունների միջև: Ասորական աղբյուրներից իմանում ենք, որ զեռես մեր լվականության II դարի վերջերից Եղեսիայում գոյություն է ունեցել Երրայեցերենից ասորերեն թարգմանված հին կտակարանի «Փեշիտտա» (peschitto) կամ «պարզ» կոչված օրինակը: Ասորագետ պատմաբանների ենթադրությամբ³¹ այս թարգմանությունը կատարել են հրեա առաջին քրիստոնյաները, որոնք եկել ու հաստատվել էին Եղեսիայում: Նոր կտակարանի ասորերեն երեք թարգմանություն է եղել: Առաջինը հայտնի է Տափաշոսի Դիատեսարոն կամ «Ավետարանների համարարառ» անունով: Հեղինակը II դարում շորս ավետարանները միացնելով կազմել է մեկ գիրք: Երկրորդ թարգմանությունը, նորից II դարի վերջերին, կատարվել և գործածվել է Անտիոքում: Սա կոչվում է «Մեփարեշե» (mepharreshe), այսինքն՝ «առանձին ավետարաններ», այս գիրքը հայտնի է նաև հրատարակչի անունով՝ «Կյուրյոսի ավետարան»: Երրորդը՝ նոր կտակարանի փեշիտտան (այսինքն՝ «պարզ կոչվածը») է, հունական բնագրից թարգմանել է Եղեսիայի Ռարուլաս Լպիսկոպոսը Եփեսոսի ժողովից հետո: Այս Լպիսկոպոսի հրամանով «Համարարառը»

²⁸ Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, գիրք Գ, գլ. ԾԷ, էջ 333—335:

²⁹ Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1907, էջ 33:

³⁰ Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, գիրք Գ, գլ. ԾԵ, էջ 329:

³¹ Grawford Burkitt, Evangelin da-Mepharreshe, vol. II, Cambridge, 1904.

ուշնչացվել է և դրա փոխարեն գործածության մեջ է դրվել իր իսկ կատարած թարգմանությունը³²:

IV դարի վերջերին և V դարի սկզբներին մեզ հասած ասորական գրականության մեջ (օրինակ՝ Աֆրադի, Եփրեմ Ասորու գործերում) «Աստվածաշնչից» կատարվող մեջբերումները եղել են հին կտակարանի փեշիտտայից («պարզ») և նոր կտակարանի «դիատեսսարոնից» («համարարառ»): Նշանակում է ասորական եկեղեցիներում այդ ժամանակաշրջանում գործածվել են այդ օրինակները և սրանցից էլ հայերը պետք է որ կատարած լինեին «Աստվածաշնչի» առաջին թարգմանությունը: Գրիգոր Խալաթյանցը իր պրպոտումների ժամանակ հայերեն ձևագրերում հայտնաբերել է հին կտակարանի «Գիրք մնացորդացի» մի հնագույն օրինակը³³, որը, ինչպես ենթադրվում է, ասորերենից կատարված հայերեն առաջին թարգմանության նմուշներից է: Ասորական «Համարարառը» մեզ չի հասել, պահպանվել է միայն այդ գրքի Եփրեմ Ասորու մեկնությունը հայերեն թարգմանությամբ:

Խորենացու վկայությամբ, հայերը այս ժամանակամիջոցում կատարում են «Աստվածաշնչի» երկրորդ թարգմանությունը՝ սրղեն հունարենից. Եփեսոսի ժողովից հետո թարգմանիչների այն սերունդը, որ զնացել էր Բյուզանդիա, վերադառնում է և Տարոնի Աշտիշատում հանդիպում Մեսրոպին ու Սահակին: Աշակերտները Եփեսոսի ժողովի վեց կանոնների հետ միասին իրենց ուսուցիչներին են մատուցում «Աստվածաշնչի» (հունարեն) ստույգ օրինակները: Սահակն ու Մեսրոպը այդ օրինակների հիման վրա «դարձել թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն փոխանակի հանդերձ նորօք վերստին յօրինեալ նորոգմամբ»³⁴: Հայտնի է, որ բյուզանդական եկեղեցին 431 թ. տեղի ունեցած Եփեսոսի տիեզերական ժողովում հաղթանակ է տանում: Հավանաբար նա կարողացել է պարտադրել, որ եկեղեցիներում գործածությունից դուրս բերվեն «Աստվածաշնչի» ոչ-հունական թարգմանությունները:

Բացի «Աստվածաշնչից», V դարի սկզբներին հայերը ասորերենից թարգմանում են պատմական, վարքագրական և եկեղեցական գրքեր: Այս թարգմանությունները կատարվում են Մեսրոպ Մաշտոցի անմիջական ղեկավարությամբ, նրա աշակերտների ձեռքով: Ինչպես պատմում է Խորենացին, Մեսրոպ Մաշտոցը իր աշակերտներից Հովսեփին ու Եղիշիկին ուղարկում է Եգիպտոս՝ «զի որ միանգամ գացին անդ գիրք ասացեալ նոցին սրբոց հարցն առաջնոց թարգմանեալ ի մեր լեզուս բերցեն փոխով»³⁵: Պատմահոր վկայությամբ այս շրջանում Մաշտոցի թելադրանքով ասորերենից թարգմանում են Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմությունը»³⁶:

Նույն թարգմանիչների սերնդին ենք պարտական ասորական գրական յավագույն հուշարձաններից մեկի՝ Գորիա և Շմոնի թարգմանությունը, որը հարուստ է արևելյան բանաստեղծության վառ գույներով և պատկերներով³⁷:

³² R. Duval, Histoire d'Edesse, էջ 262:

³³ Գրիգոր Խալաթյանց, Գիրք մնացորդաց, ըստ հնագույն թարգմանության, Խոսիվա, 1899:

³⁴ «Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց», գիրք Գ, գլ. ԿԱ, էջ 343:

³⁵ Նույն տեղում, էջ 341:

³⁶ Նույն տեղում, գիրք Բ, գլ. Ժ, էջ 120:

³⁷ Գալուստ Տեր-Մկրտչյան, Գորիա և Շմոնի վկայից, Վաղ-պատ, 1896:

Նման արժևք է ներկայացնում նույնպես Արրահամ Խոստովանողի կողմից V դարում թարգմանված Մարութայի «Վկայք Արևելիցը»³⁸: Այս շրջանի գեղեցիկ թարգմանություններից են նաև IV դարի հեղինակ Աֆրաազի կամ Հակոբ Մրժրընացու ճառերը, որոնք մեզ են հասել «Զգօն» խորագրով³⁹:

Հայ-ասորական մշակութային սերտ հարաբերությունների արտահայտություններից է նաև ասորական մի շարք առասպելների, լեգենդների հայացումը: Նմանօրինակ պատմություններից են Արգարի զրույցը⁴⁰, Թաղևոս առաքյալի և Սանդուխտ կույսի նահատակության պատմությունը⁴¹, Հակոբ Մժրնացու Հայաստանում կատարած հրաշքների պատմությունը և այլն⁴²: Ասորական այդ զրույցները, մի քանի դար շարունակ պատմվելով Հայաստանում, հայացվել են և մեր պատմիչների կողմից գրի առնվել որպես հայկական զրույցներ: Խորենացին այս զրույցները շարադրելիս իր ձևով տակ ոճնեցել է հայկական տարրերակները, թեև նրան ծանոթ են եղել Լարուրնայի ասորական բնագրերը:

Հայ-ասորական մշակութային կապերի կարևոր երևույթներից է ասորի հեղինակների գործերի օգտագործումը հայ պատմիչների կողմից որպես սկզբնաղբյուր: Խորենացին նշում է, որ իր Հայոց պատմությունը գրելիս օգտագործել է ասորի հեղինակներ Մար Արաս Կատինայի, Բարդաթանի և Բար Մումայի պատմական երկերը: Ոմանք նույնացրել են վերջին երկու ասորիներին⁴³, մինչդեռ Բարդաթանը ապրել է մեր թվականության II դարի վերջում և III դարի սկզբներին: Պատմահայրը գրում է, որ Բարդաթանից ինքը օգտվել է մինչև Խոսրով Ա-ի ժամանակաշրջանի պատմությունը գրելիս, իսկ Բար Մումայի պատմությունից վերցրել է Սասանյանների իշխանության գլուխ անցնելու Արտաշիրի և Շապուհ Ա-ի հետ կապված պատմական տեղեկությունները: Ասորական գրականության մեջ հայտնի են երկու Բար Մումա, երկուսն էլ V դարից: Առաջինը եղել է նեստորական շարժման ղեկավարներից մեկը, և այդ իսկ պատճառով աքսորվել է Երեսիայից (449 թ.): Երանից հետո նա գալիս է Մժրին և դառնում քաղաքի եպիսկոպոսը: Երկրորդ Բար Մուման Նվտիքյան վարդապետության հետևորդներից էր, որի համար և դատապարտվել է Քաղկեդոնի 451 թ. ժողովում: Նա մահացել է 458 թ.: Ասորագետ Ասսեմանիի վկայությամբ⁴⁴, այս Բար Մուման Ռեծ հեղինակություն է ունեցել Արևելքի եկեղեցիներում, նույնիսկ ամեն տարի փետրվարի 1-ին, ասում է պատմաբանը, հաջ եկեղեցում նշել են այս անձնավորության անունը⁴⁵: Ասորական աղբյուրները Բար Մումայի պատմական երկի մասին հիշատակություններ չունեն: Առայժմ դժվար է որոշել, թե երկու Բար Մումաններից որի գործն է աղբյուր ծառայել մեր պատմահոր համար:

38 Գ ա լ ո ս տ Տ ե Ր - Մ կ ր տ շ յ ա ն, Արրահամ: Խոստովանողի Վկայք Արևելից, էջմիածին, 1921:

39 Հ ա կ ո Ր Մ ժ Ր ն ա ց ի, Գիրք որ կոչի Զգօն, Կոստանդնուպոլիս, 1824:

40 «Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց», գիրք Բ, գլ. ԻԶ, էջ 142:

41 «Վկայարանութիւն ս. Թաղէի առաքելոյ և Սանդխտոյ կուսի», Վենետիկ, 1853:

42 «Փառատոսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց», դպր. Գ, գլ. Ժ, էջ 37:

43 Г. Х а л а т ь я н ц, Армянские Аршакиды, Москва, 1903, էջ 117:

44 В. Р а й т, Краткий очерк истории Сирийской литературы, перев. Тураевой, СПб, 1902, էջ 39:

45 Նույն տեղում, էջ 47:

Ասորական աղբյուրներից օգտվելու հետքեր է պիտել Եղիշեի մոտ Գրիգոր հայաթյանցը իր «Եղիշեի աղբյուրների առթիվ» ուսումնասիրության մեջ⁴⁶։ Նույն այս աղբյուրը օգտագործվել է Ագաթանգեղոսի Հայոց պատմության մեջ⁴⁷։ Եղիշեի իր «Եղծ աղանդոցը» գրելիս նույնպես օգտագործել է ասորի հեղինակների գործերը։ Հայագետ Կարիերը իր «Եղնկա մեկ նոր աղբյուրը» տաումնասիրության մեջ մատնանշել է այս հանգամանքը⁴⁸։

Հայ-ասորական մշակութային սերտ հարաբերությունների մասին է վկայում բազմաթիվ ասորերեն բառերի մուտքը հայ լեզվի մեջ. ասորերեն այդ բառերի բնույթից նույնիսկ կարելի է ենթադրել, թե հայերի և ասորիների միջև ինչպիսի կապեր են եղել։ Եթե մի կողմ թողնենք կրոնական բառերը, ապա փոխառությունների մեջ մենք կհանդիպենք արհեստների կամ արհեստանոցներում օգտագործվող գործիքների, առևտրի, թանկարժեք քարերի բազմաթիվ անուններ⁴⁹։ Պետք է նշել սակայն, որ ասորիները ոչ միայն բերել կամ ներմուծել են այդ ապրանքները Հայաստան, այլև տեղում բացված գործատներում հավանաբար կազմակերպել են դրանց արտադրությունը։ Պետք է նշել նաև ասորերենից հայերեն մուտք գործած բժշկության և դեղերի վերաբերյալ բառերը, որոնք հաստատում են այդ ասպարեզում հայերի՝ ասորիներից կրած ազդեցությունը⁵⁰։ Իդեոսիան դեռ մ. թ. առաջին դարերից հայտնի է եղել իր բժիշկներով, որոնք պատվավոր տեղ են զբաղեցրել պարսկական արքունիքում։ Ասորի բժիշկները շարունակել են իրենց կոչման բարձրության վրա մնալ նույնիսկ այն ժամանակ, երբ արարները հաստատել են իրենց քաղաքական տիրապետությունը Արևելքում։ Ինչպես գրում է VI դարի ասորի պատմիչ Յոզվա՝ Ստրիտը, դեռ վաղ ժամանակներից Եղեասյուն գործել է քաղաքի հիվանդանոցը⁵¹։

Երկար ժամանակ կապեր են եղել հայ և ասորի եկեղեցիների միջև. մեք պատմիչները բազմաթիվ տեղեկություններ են տալիս ասորի եկեղեցական գործիչների՝ Հայաստանում լինելու մասին։ Ասորերենը երկար տարիներ Հայաստանում, հունարենի հետ միասին, եղել է կրոնական լեզու. արարողություններն ու կրոնական ընթերցումները կատարվել են այդ լեզուներով, մեծ քանակությամբ ասորերեն կրոնական բառեր անցել են հայոց եկեղեցու ծիսակատարությունների ու պաշտամունքի մեջ։ Պրոֆ. Երվանդ Տեր-Մինասյանը իր «Հայոց եկեղեցու հարաբերությունները Ասորվոց եկեղեցիների հետ» արժեքավոր ուսումնասիրության մեջ քննարկել ու լուսարանել է այդ կապերը⁵²։ Հայ-ասորական հեղինակական կապերին պետք է վերագրել նաև ասորական

⁴⁶ Գրիգոր հայաթյան, Եղիշեի աղբյուրների առթիվ, «Հանդես ամսօրյա», 1895, էջ 113։

⁴⁷ Գալուստ Տեր-Մկրտչյան, Գորիա և Շմոնի վկայից (Ագաթանգեղոսի աղբյուրներից), Վաղարշապատ, 1896։

⁴⁸ A. Carriere, Եղնկա մեկ նոր աղբյուրը, La naissance d'Ormizd et d'Ahriman. d'après Theodore Bar Khouni, Eznik et Ellsee, «Հանդես ամսօրյա», 1900, էջ 183։

⁴⁹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հատ. 1, Երևան, 1940, էջ 336։

⁵⁰ Նույնը, օրինակ, մաշարա-թոքախտ, սակամունիա-դժվարաշնչություն, մարսել, ապր-սամ, պալասան, զոպա-բույս, շուփա-աչքի դեղ, սպեղանի ելն։

⁵¹ Н. Пигулевская, Месопотамия на рубеже, М.—Л., 1940 (Нешу Стлит, 10), էջ 34։

⁵² Երվանդ Տեր-Մինասյան, Հայոց եկեղեցու հարաբերությունները Ասորվոց հետ, էջմիածին, 1908։

կանոնների մուտքը Հայաստան: Հակոբոս Տաշյանը իր «Վարդապետութիւն առաքելոց» ուսումնասիրության մեջ համեմատել է ասորական կանոնները հայկականի հետ և մատնանշել հայկականի՝ ասորականից թարգմանված լինելու հանգամանքը⁵³:

Ուսումնասիրության արժանի է նաև հայ-ասորական քաղաքական իրավունքի փոխազդեցությունը: Արսեն Ալտճյանը իր «Ասորական դատաստանագրքի» բնագրի թարգմանության հրատարակության կապակցությամբ գրում է, որ Ասորական դատաստանագրքը և հայ հին իրավունքը փոխադարձ ազդեցության մեջ են եղել⁵⁴: Շարլ Ռիլը «Հայկական ճարտարապետություն» հետաքրքրական աշխատության մեջ⁵⁵ ցույց է տալիս հայկական և ասորական ճարտարապետությունների միջև եղած հին շրջանի կապերը:

Հայ-ասորական հարաբերությունները մշակույթի բնագավառում, հարկավ, վերահիշյալով չեն սահմանափակվում: Այս հոդվածում մենք կանգ առանք այդ հարաբերությունների համար բնորոշ միայն մի քանի հարցերի վրա:

АРМЯНО-СИРИЙСКИЕ КУЛЬТУРНЫЕ СВЯЗИ В IV—V ВЕКАХ

Г. Г. МЕЛКОНЯН

(Р е з ю м е)

До сих пор историческую основу армяно-сирийских культурных связей исследователи искали лишь в области взаимоотношений армянской и сирийской церквей. Однако тщательное изучение армянских и сирийских первоисточников показывает, что основой армяно-сирийских культурных связей явилось экономическое сотрудничество двух народов. Этим связям способствовала также совместная борьба армян и сирийцев против Византии и византийской церкви, с одной стороны, и Ирана и зороастризма — с другой.

Зародившиеся экономические связи сирийцев и армян, граничивших с юга с царством Осроены, ускорили процесс возникновения в Софее первых армянских городов. Эти экономические связи получают большое развитие еще при Тигране II, достигая максимума в IV—V вв.

Наряду с широкими экономическими взаимоотношениями развиваются и культурные связи между двумя народами. Самым ярким выражением этого является совместная работа армянских и сирийских ученых в период изобретения армянского алфавита, первый перевод Библии с сирийского языка, арменизация сирийских, особенно христианских, легенд и мифов, использование трудов сирийских авторов армянскими историками указанного времени и т. д.

⁵³ Հ. Տաշյան, Վարդապետութիւն առաքելոց, անվավերական կանոնաց մատեանը, «Հանդես ամսօրյա», 1893, էջ 1:

⁵⁴ Արսեն Ալտճյան, Ասորական դատաստանագրքը, էջմիածին, 1917, էջ 2:

⁵⁵ Charles Diehl, l'Architecture Arménienne, «Revue des études Arméniennes», t. I, Paris, 1921.